Դիմում-հայտի հետ ներկայացվող փաստաթղթերը

- միջնակարգ կրթության ատեստատը, միջին մասնագիտական և մասնագիտական տեխնիկական կրթության մասին փաստաթուղթը (բնօրինակը),
- 6 լուսանկար (3 x 4 սմ չափսի),
- անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր, զինվորական գրքույկ, ծննդյան վկայական, փախստականի վկայական, ՀՀ հատուկ անձնագիր, կացության վկայական),
- զինվորական գրքույկ և զինվորական կոմիսարիատից տեղեկանք ժամկետային զինվորական ծառայությունը անցնելու մասին,
- արտոնություններից օգտվող դիմորդները ներկայացնում են համապատասխան փաստաթղթեր (1-ին կամ 2-րդ խմբի և մինչև 18 տարեկան մանկուց հաշմանդամության, ինչպես նաև զինծառայող ծնողի զոհվելու, առանց ծնողական խնամքի մնացած լինելու մասին),
- միջազգային և հանրապետական մրցույթների (օլիմպիադաներ, փառատոներ) դիպլոմները,
- տեղեկանք 2016թ. կենտրոնացված ընդունելության քննությունների գնահատականների վերաբերյալ,
- 2016թ. /2015թ./ «Հայոց լեզու, գրականություն», «Հայոց պատմություն», «Ընդհանուր պատմություն», «Քիմիա», «Կենսաբանություն», «Ֆիզիկա», «Աշխարհագրություն», «Օտար լեզու» (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, իսպաներեն, իտալերեն, ռուսերեն, պարսկերեն լեզուներ) և «Մաթեմատիկա» առարկաների ավարտական միասնական քննությունների վկայագիր:

<u>Ծանոթություն</u> - Փաստաթղթերը հանձնելիս դիմորդը վճարում է 1500 դրամ՝ փաստաթղթերի ընդունման և ձևակերպման համար, ինչպես նաև յուրաքանչյուր քննության համար 1500-ական դրամ: Անկախ քննություններին մասնակցելուց և արդյունքից վճարված գումարը չի վերադարձվում:

Դիմորդներին տրվող արտոնություններ

– Հետևյալ կարգավիճակ ունեցող դիմորդները բուհ ընդունվելու դեպքում օգտվում են համապատասխան օրենքներով սահմանված ուսման վարձի ամբողջական փոխհատուցման իրավունքից.

1. 1-ին և 2-րդ խմբերի և մինչև 18 տարեկան մանկուց հաշմանդամները, որոնց համար, բժշկասոցիալական փորձաքննության գործակալության կողմից տրված եզրակացության համաձայն, տվյալ մասնագիտությամբ սովորելը և հետագայում աշխատելը հակացուցված չէ,
2. առանց ծնողական խնամքի մնացած մինչև 23 տարեկան երեխաները:

– Քննությունները դրական միավորներով հանձնած դիմորդներից, պետական բյուջեի միջոցների հաշվին, մրցույթից դուրս, ընդունվում են ՀՀ պաշտպանության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների երեխաները, ժամկետային զինվորական ծառայության պարտականությունները կատարելիս հաշմանդամ դարձած քաղաքացիները՝ համաձայն ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության և ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության տված տեղեկանքների:

– Պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված դիմորդները քննությունները դրական միավորներով հանձնելու դեպքում բուհ են ընդունվում մրցույթից դուրս, ըստ մասնագիտությունների նախարարության կողմից հաստատված տեղերի:

Ընդունող հանձնաժողով